| «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1 | CONVERSE BANK | MINUTES # 1 OF THE GENERAL ANNUAL MEETING OF CONVERSE BANK CLOSED JOINT-STOCK COMPANY SHAREHOLDERS |
|---|---|---|

ք. Երևան 5-ը հունիսի, 2008թ.

2008թ. հունիսի 5-ին ժամը 18:00-ին «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փողոց, 26/1 հասցեում տեղի ունեցավ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (հետագայում՝ Ընդհանուր ժողով): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը բացակայում էր ՀՀ տարածքից՝ ժողովն իրականացվեց հեռախոսակապի միջոցով, իրական ժամանակի ռեժիմում: Ժողովին մասնակցել են ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերեր.

- «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼ-ՍԻ՝ ի դեմս Ջուան Պաբլո Գեչիդջյանի՝ 11714 ձայնի իրավունքով,
- Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանի՝ 617 ձայնի իրավունքով:

Ժողովի մասին ծանուցված էին՝

Yerevan June 5, 2008

The General Annual Meeting of "Converse Bank" Closed Joint-Stock Company (hereinafter "the General Meeting") was held on June 5, 2008 at 18:00 at the location of "Converse Bank" Closed Joint-Stock Company: 26/1 Vazgen Sargsyan Street, Republic Square, Yerevan, RA. Taking into consideration that Father Torgom Rev. (Adam) Tonikyan, the representative of Armenian Saint Apostolic Church, was absent from the Republic of Armenia, the Meeting was conducted through telephone connection, in the regime of real time. In the meeting the shareholders having the right to participate in general meeting took part:

- Advanced Global Investments LLC, Represented by Mr. Juan Pablo Gechidjian with the right of 11714 votes
- Armenian Saint Apostolic Church, Represented by Father Torgom Rev. (Adam) Tonikyan with the right of 617 votes

The following persons were notified of the Meeting:

- ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի տեղակալը,
- Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձի ղեկավարը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամները,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին վերահսկողության ծառայության պետը և ծառայության աշխատակիցները,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-Գլխավոր հաշվապահը,

որոնցից Ժողովի նիստին ներկա էին՝

- ՀՀ ԿԲ լիազոր ներկայացուցիչներ Ա. Եղիազարյանը և Ն. Սարգսյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ Արմեն Տեր-Տաճատյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Ա. Ղուկասյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին վերահսկողության ծառայության պետ-Գլխավոր վերստուգիչ Զ. Ռաֆայելովը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-Գլխավոր հաշվապահ Ա. Կարախանյանը:

Հաշվի առնելով, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տեղաբաշխված քվեարկող հասարակ (սովորական) բաժնետոմսերի ձայների գումարային քա-

- Deputy Chairman of the RA Central Bank
- The Manager of the entity to have conducted external audit in the Bank during the reporting year
- “Converse Bank” CJSC Board Members
- “Converse Bank” CJSC Internal Supervision Service Head and staff
- “Converse Bank” CJSC Accounting Department Head-Chief Accountant

From among the above persons, the following attended the Meeting:

- A. Yeghiazaryan and N. Sargsyan, authorized representatives of the RA CB
- Armen Ter-Tachatyan, Board Member of “Converse Bank” CJSC
- A. Ghukasyan, “Converse Bank” CJSC General Director
- Z. Rafayelov, “Converse Bank” CJSC Internal Supervision Service Head-Chief Supervisor
- A. Karakhanyan, “Converse Bank” CJSC Accounting Department Head-Chief Accountant

Whereas the total of votes of placed common (ordinary) voting shares of “Converse Bank” Closed Joint-Stock Company is 12331 and the total of the

նակը կազմում է 12331 ձայն, իսկ Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերին պատկանող ձայների գումարը հավասար է 12331 ձայնի՝ հետևաբար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն Ընդհանուր ժողովը համարվեց իրավասու և հայտարարվեց բացված:

Ընդհանուր ժողովը նախագահում էր Ջուան Պաբլո Գեչիդջյանը, իսկ ժողովի քարտուղարն էր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աշխատակազմի ղեկավար Լիլիթ Սարգսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2007 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների և կրած վնասների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման մասին:

4-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Զեկուցեց՝ Ջուան Պաբլո Գեչիդջյանը Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2007 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների և կրած

votes owned by the General Meeting participants is 12331, therefore pursuant to Article 77 of the RA Law “On Joint-Stock Companies” the General Meeting was considered competent and was declared open.

The General Meeting was chaired by Mr. Juan Pablo Gechidjian and Ms. Lilit Sargsyan, “Converse Bank” CJSC Administration Head, was the Secretary of the Meeting.

AGENDA

1. On allocation of profits gained and losses incurred, during the financial-economic activity of “Converse Bank” Closed Joint-Stock Company in 2007. On payment of annual dividends and approval of the amount thereof.

**ON ISSUE 4**

Heard: the report of Juan Pablo Gechidjian on allocation of profits gained and losses incurred, during the financial-economic activity of “Converse Bank” Closed Joint-Stock Company in 2007, as

վնասների բաշխման մասին, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման և տարեկան շահութաբաժինների չափի մասին:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ 2007թ. ֆինանսական ցուցանիշները՝ չվճարել շահութաբաժիններ:

2. 2007թ. ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ստացված զուտ շահույթն ամբողջությամբ ուղղել եկամուտների պահուստին:

| | |
|---|---|
| Կողմ՝ | 12331 ձայն |
| Դեմ՝ | 0 ձայն |
| Ձեռնպահ՝ | 0 ձայն |

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

well as on payment of annual dividends and approval of the amount thereof.

Resolved:

1. Not to pay dividends, basing on the financial indexes of “Converse Bank” CJSC in 2007.
2. Allocate the entire net profit generated by the financial-economic activity of “Converse Bank” CJSC in 2007 to the income reserve fund.

| | |
|---|---|
| **For:** | **12331 votes** |
| **Against:** | **0 votes** |
| **Abstained:** | **0 votes** |

**TRUE TO THE ORIGINAL**

**GENERAL DIRECTOR**